

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՎԱԾ ԺՈՂՈՎ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

Սույն թվականի հունիսի 3—6 օրերին Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի նախաձեռնությամբ տեղի է ունեցել ժողով՝ նվիրված մարդու իրավունքների պաշտպանությանը: Ժողովին մասնակցել են Բուլղարիայում, Ռումինիայում, Հարավսլավիայում, Սովետական Միությունում գործող Եկեղեցիների շուրջ 20 ներկայացուցիչներ:

Հայ Առաքելական Եկեղեցու կողմից, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, սույն ժողովին իր մասնակցությունն է բերել նաև Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Անանիա եպիսկոպոս Արաբաջյանը:

Հունիսի 3-ին, կիրակի օրը, առավոտյան, Սովետական Միությունում գործող Եկեղեցիների ներկայացուցիչները, Տ. Անանիա եպիսկոպոսի առաջնորդությամբ, այցելություն են տվել Սոֆիայի հայոց առաջնորդանիստ եկեղեցի, որտեղ նրանց ընդունել և բարի գալուստ է մաղթել տեղի հայոց հոգևոր հովիվ Տ. Մեսրոպ քահանա Բենլիյանը:

Երեքօրյա ժողովը, որին նախագահել է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովի քարտուղար դոկտոր Թեո Չուն (Շվեյցարիա), ընդունել է մի շարք կարևոր որոշումներ արտասահմանյան որոշ երկրներում մարդու իրավունքների ոտնահարման, սպառազինությունների մրցավազքի, ցեղային խտրականության ու ճնշման, կանանց իրավունքների պաշտպանության և այլ հարցերի վերաբերյալ:

Հունիսի 5-ին ժողովի մասնակիցներին ընդունել է Բուլղարական Օրթոդոքս Եկեղեցու պետ, Նորին Սրբություն Տ. Մաքսիմ Պատրիարքը, որը ողջունել է նրանց և իր գոհունակությունը հայտնել ժողովի բարեհաջող ավարտի կապակցությամբ՝ կամենալով հետագա հաջողություններ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսի աստվածահաճո աշխատանքներին: Այս առթիվ Նորին Սրբությունը Տ. Անանիա եպիսկոպոսին խնդրել է Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսին փոխանցել իր եղբայրական ջերմ ողջույններն ու հաջողության բարեմաղթությունները: